



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Թիւ 132/18

Անթիլիաս, Լիբանան

Անթիլիաս, 14 Դեկտեմբեր 2018

Մեծայարգ
Տիար Նիկոլ Փաշինեան
Վարչապետի պաշտօնակատար
Հայաստանի Հանրապետութիւն
Երեւան

Սիրելի՛ Պրն. Փաշինեան,

Օր մը երբ Յիսուս իր աշակերտներուն հետ միասին լինին միւս ափը կ'անցներ, գօրաւոր հով մը փոթորկեց լինը, եւ ապա, ինչպէս Աւետարանը կ'ըսէ, խաղաղութիւն տիրեց (Ղուկ. 8, 22-25): Անցնող ամիսներուն, մեր ժողովուրդը հայրենիքին կեանքին մէկ ափէն առաջնորդեցիք միւս ափը: Փոթորկեցաւ մեր կեանքի լինը: Սակայն, շնորհիւ մեր ժողովուրդի հաւատքին ու կամքին եւ ապա խորհրդարանական ընտրութեամբ, խաղաղութիւն տիրեց Հայաստանէն ներս: Ներկայ խաղաղութիւնը պէտք է ըլլայ մնայուն ու ամուր՝ հաստատուած "սիրոյ ու համերաշխութեան" գօրեղ հիմքերուն վրայ:

Ջերմօրէն կ'ողջունենք իր կեանքը յեղափոխելու մեր ժողովուրդին քաջութիւնն ու տեսլականը: Ջերմօրէն կը շնորհաւորենք նաեւ Ձեր ընտրութիւնը: Շուտով, եւ աւելի բարձր պատասխանատւութեամբ, պիտի լծուիք հայրենիքի ծառայութեան այնքան նուիրական առաքելութեան: Հայրենիքին ծառայելը գերազանցօրէն առաքելութիւն է: Այս համոզումէն մեկնելով, պիտի ուզէինք Ձեզի հետ բաժնել կարգ մը մտածումներ ու սպասումներ:-

- Հայաստանի մէջ կատարուած յեղափոխութիւնը, իր էութեամբ, ժողովրդակեդրոն շարժում մըն էր: Տարիներու ընթացքին կուտակուած ժողովրդային ընդվզումը առիթ կը փնտռէր պայթելու: Դուք այդ խայծը ու մղիչ ուժը հանդիսացաք: Հետեւաբար, անհրաժեշտ է որ Ձեր հայրենակերտ առաքելութեան հիմքը, ուղղութիւնը ու նպատակը շարունակէ մնալ ժողովուրդը: Արդարեւ, իսկական ղեկավարը ժողովուրդին հարազատ ծնունդն է ու հաշուետու է ժողովուրդին: Ժողովուրդը մեծ ակնկալութիւններ ունի Ձեզմէ ու Ձեր կառավարութենէն:

- Սպասելի է, որ Ձեր կառավարութիւնը կազմուած ըլլայ փորձառու, մասնագէտ ու մանաւանդ վստահելի եւ հայրենաճաշակ անձերէ: Մօտիկ անցեալին բորւրցիայի ու մեծաշնորհներու գծով հայրենի ժողովուրդին ապրած դառն փորձառութիւնը, վստահաբար Ձեզ պիտի մղէ բարձրագոյն աստիճանի խստապահանջութիւն ցուցաբերել ոեւէ ձեւի ու չափի արատաւոր երեւոյթներու նկատմամբ: Օրէնքն ու արդարութիւնը պէտք է ըլլան բոլորէն վեր ու բոլորի՛ն համար:

- Յեղափոխութիւնը իր աւարտին չէ հասած, պէտք է շարունակուի տարբեր ձեւաչափերով ու շեշտաւորումներով՝ հայրենի կեանքի բոլոր մարզերէն ներս: Ժամա-



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Թիւ 132/18

Անթիլիաս, Լիբանան

Անթիլիաս, 14 Դեկտեմբեր 2018

ճակն է, որ խօսքը գործի վերածուի եւ՝ գործը դառնայ ծրագիր, գործընթաց, այնպիսի առաջնահերթություններու նշողմով, որոնք ըլլան համահունչ ժողովուրդի կարիքներուն ու սպասումներուն եւ ներկայ պայմաններուն:

- Ակնկալելի է, որ պատասխանատուութիւնը, քափանցիկութիւնը ու հաշուետւութիւնը դառնան Ձեր գլխաւորած կառավարութեան աշխատանքին հիմնական սկզբունքները: Այս սկզբունքներն են, որոնք պիտի երաշխաւորեն իւրաքանչիւր նախարարութեան եւ կառավարութեան աշխատանքին որակը ու վստահելիութիւնը: Այս սկզբունքներն են, որոնք Ձեր իշխանութիւնը գործնապէս պիտի դարձնեն ժողովուրդի՝ իշխանութիւնը:

- Արտաքին ճակատին վրայ, անկասկած որ Հայաստանը պիտի յարաբերի ու գործակցի մեկնելով իր ընդհանրական ու գերագոյն շահերէն: Միաժամանակ, չենք կրնար անտեսել ընդհանրապէս ներկայ աշխարհին եւ յատկապէս Կովկասին առնչուած աշխարհաքաղաքական շահերուն հողովոյթը: Ներկայ ժամանակներու բազմաթիւ ու բազմազան տագնապներու ու մարտահրաւերներու յորձանուտին մէջ թիւարեւր, գիտե՛նք, դժուար է մեր փոքր երկրին համար: Հետեւաբար, անհրաժեշտ է ըլլալ նկուն ու զգօն մեր մօտեցումներուն մէջ:

- Արցախը, բնականաբար, պիտի դառնայ Ձեր օրակարգի գլխաւոր խնդիրներէն մէկը: Ինչպէս ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման, նոյնպէս Արցախի ժողովուրդին ինքնորոշման, եւ Արցախի ու Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան գծով մեր ողջ ժողովուրդին յստակ ու անսակարկելի կեցուածքը ծանօթ է Ձեզի: Վստահ ենք, հետեւաբար, որ մեր ժողովուրդին կեցուածքին թարգմանը պիտի հանդիսանաք միջազգային շրջանակներէն ներս:

- Սփիւռքը, իր կարգին, սպասելի է որ առաջնահերթ տեղ գրաւէ Ձեր կառավարութեան որդեգրելիք աշխատանքային ծրագրին մէջ: Շուրջ 25 տարիներու Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը, իր դրական թէ՛ թերի երեսներով, հարկ է որ ըլլայ յուշարար ու ուղեցոյց՝ վերաբժեւորումի ու վերակազմակերպումի ենթարկելու այս յոյժ կարեւոր բնագաւառը: Արդարեւ, Սփիւռքի ամբողջական ու գործօն մասնակցութիւնը համահայկական թեմաներու ու մարտահրաւերներու քննարկման, համահայկական կառոյցներու ու մեքանիզմներու հաստատումով, կրնայ մեծապէս նպաստել համահայկական մտածողութեան ձեւաւորման ու գործակցութեան զարգացման: Նման աշխատանք մը կը նկատենք անյետաձգելի հրամայական. եւ նշեալ առաջադրանքներու իրագործման մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը՝ առանցփայլ:

- Նոր Ազգային ժողովի ընտրութիւնը, միջազգային վկայութեամբ մեր ժողովուրդին յաղթանակն է, ինչպէս նաեւ՝ մեր հանրապետութեան վարկ ապահովող ժողովրդավարութեան քննարկէք արտայայտութիւն մը: Ձեր առջեւ կը բացուի մեր



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԹԻԼ 132/18

Անթիլիաս, Լիբանան

Անթիլիաս, 14 Դեկտեմբեր 2018

ընդհանրական շահերու ու գերագոյն արժէքներու շուրջ մեր ժողովուրդին ներքին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը: Մեր սպասումն է, որ այլեւս բաժանարար լոգունգները եւ այլապէս բեւեռացումներ ու խրամատեր յառաջացնող մօտեցումները հեռանան մեր ժողովուրդի կեանքէն: Անհրաժեշտ է բազմակարծիքութեան լայն տեղ տալ մեր քաղաքական մտածողութեան եւ ընդհանրապէս ազգային կեանքէն ներս, որպէսզի կարելի դառնայ մեր ժողովուրդին, Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ, ողջ ներուժը ի սպաս դնել հայրենիքի հզօրացման եւ մեր գերագոյն իղձերու իրականացման:

Սիրելի՛ Պրն. Փաշինեան,

Աւետարանով սկսանք Մեր խօսքը, կ'ուզենք Աւետարանով վերջացնել: Օր մը, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.- "մարդիկ իմ մասին ի՞նչ կ'ըսեն..." (Մարկ. 8, 27): Յիսուս որ Աստուած է, իր երկրաւոր առաքելութեան մէկ հանգրուանին ուզեց իմանալ ժողովուրդին կարծիքը իր մասին: Ահա Քրիստոսին պատգամը մեզմէ իւրաքանչիւրին, հոգեւոր թէ աշխարհական ղեկավարներուն, մեր ժողովուրդին ծառայութեան լծուած բոլոր կառոյցներուն: Ոեւէ ղեկավարի կամ կառոյցի յաջողութեան նախապայմանը ծանօթանալ է ժողովուրդին բազկերակին՝ զինք մղելու ինքնաճանաչութեան: Արդ, վստահ ենք, որ Ձեր յառաջիկայ գործունէութեան ընթացքին յանախակի աոիքներով պիտի դառնաք ժողովուրդին, ունենալու համար Ձեր ծառայութեան իրա՛ւ արժեւորումը:

Դա՛րձեալ կը շնորհաւորենք Ձեզ: Նոր Տարուան ու Աստուածայայտնութեան տօներու սեմին Ձեզի կը փոխանցենք Մեր հայրապետական օրհնութիւնը՝ մաղթելով ամբողջական յաջողութիւն Ձեր հայրենանուէր առաքելութեան մէջ:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**